ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2015**թ.** **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՏՅՈՄ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ականավոր պետական գործիչ, վաստակավոր ինժեներ Արտյոմ Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սարմենի փողոց հ. 62 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՏՅՈՄ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ականավոր պետական գործիչ, վաստակավոր ինժեներ Արտյոմ Գևորգյանը ծնվել է 1923թ.:

1952-1961թթ. եղել է ՀԽՍՀ Կոմկուսի Կենտկոմի արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչ, 1961-1970 թթ.՝ ՀԽՍՀ Պետպլանի նախագահի առաջին տեղակալ, 1963թ.՝ ՀԽՍՀ մինիստր: 1970-1987 թթ. զբաղեցրել է ՀԽՍՀ թեթև արդյունաբերության մինիստրի պաշտոնը: 1987թ. միութենական նշանակության թոշակառու էր:

27 տարի անընդմեջ Արտյոմ Գևորգյանը եղել է ՀԽՍՀ Գերագույն Սովետի 6-11 գումարումների դեպուտատ, գիտատեխնիկական ընկերությունների Համամիութենական խորհրդի անդամ, ԽՍՀՄ թեթև արդյունաբերության գիտատեխնիկական ընկերության պատվավոր անդամ, ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ:

Բազմաթիվ աշխատությունների և հոդվածների հեղինակ է:

Արտյոմ Գևորգյանը Հայրենական մեծ պատերազմի վետերան է: Պարգևատրվել է պետական մի շարք շքանշաններով և մեդալներով՝ Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Աշխատանքային կարմիր դրոշի երեք և «Պատվո նշան» երկու շքանշաններով, ինչպես նաև բազմաթիվ պատվոգրերով:

Արտյոմ Գևորգյանը մեծ վաստակ ունի Հայաստանի արդյունաբերության բազմաթիվ տնտեսական լայնածավալ խնդիրների լուծման և, հատկապես, թեթև արդյունաբերության զարգացման գործում:

Արտյոմ Գևորգյանը մահացել է 2013թ.:

Արտյոմ Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Սարմենի փողոց հ. 62 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՏՅՈՄ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արտյոմ Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՏՅՈՄ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արտյոմ Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ